

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԿԻՐԱՆՑ, ԱՃԱՐԿՈՒՑ, ԲԵՐՔԱԲԵՐ, ՍԱՐԻԳՅՈՒՂ ԵՎ
ՆԵՐՔԻՆ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

ՏԱՎՈՒՇ, 2014

Այս հետազոտությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Բովանդակություն

Վերլուծություն իրականացնող կառույց	3
Համայնքների վերաբերյալ տեղեկություններ	4
Դիտարկվող համայնքների մրցակցային առավելությունները	5
Համայնքերի տնտեսության առաջատար ճյուղերի վերլուծություն	6
Հողագործությունը համայնքներում	7
Հացահատիկի մշակումը համայնքներում	7
Կերային ճակնդեղ	8
Ծխախոտ և Եգիպտացորեն	9
Բանջարեղենի աճեցում	9
Ջերմոցային տնտեսություններ	10
Նախաձեռնություններ հողագործության ոլորտում	11
Անասնապահությունը համայնքներում	12
Կովերի լիակյծում	14
Կթի ավտոմատ սարքավորման կիրառում	14
Կաթնատու տոհմային անասունների բուծում	15
Անասնապահության զարգացման նախաձեռնություններ	16
Այգեգործությունը համայնքներում	17
Նախաձեռնություններ այգեգործության և մրգերի վերամշակման ոլորտներում:	19
Այգեգործություն	19
Վերամշակում	20
Մեղվապահության զարգացման հնարավորությունները համայնքներում	20

Վերլուծություն իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի սեպտեմբեր - հոկտեմբեր ամիսներին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում-առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեշրթանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

Հարևանությամբ գտնվող այս 5 համայնքները արդեն մի քանի դար է, ինչ ունեն տնտեսության ու կենցաղային միահյուսված տարրեր, ուղրտներ: Մեջք մեջքի տված, անցնելով սովետական միության ընդհանուր սեփականության, 1990-ականների այդ նույն ընդհանուր սեփականության սեփականաշնորհման միջով, մեջք մեջքի տված հայրենիքը պաշտպանելով հակառակորդից, գյուղացիները ամրապնդեցին վստահությունը միմյանց հանդեպ, բարեկամացան, դարձան խնամիրներ, գործընկերներ և ընկերներ:

Եվ այժմ էլ մեջ մեջքի տված՝ փորձում են գլուխ հանել համայնքների հողերի վարչական խճճված բաժանումներից, սարքել մի քանի գյուղ սպասարկող, արդեն վաղուց մաշված ընդհանուր կոմբայնը, համատեղ կատարել գնումներ, կազմակերպել ապրանքների վաճառքը...

Հինգ համայնքներում էլ ներքին տնտեսությունները հիմնված են գյուղատնտեսության վրա, որը ապահովում է բնակիչների հիմնական եկամուտը համայնքներում՝ չհաշված արտագնա աշխատանքներից եկամուտները:

Գյուղատնտեսությունը համայնքներում դանդաղ, բայց կայուն զարգացում է ապրում՝ հիմնականում հետյալ ուղղություններով.

- Հողագործություն,
- Անասնապահություն,
- Այգեգործություն,
- Առաջնային գյուղատնտեսական ապրանքների վերամշակում:

Համայնքների վերաբերյալ տեղեկություններ

	Կիրանց	Աճարկուտ	Ներքին Շաղկավան	Սարիգյուղ	Բերքաբեր
Բնակչություն	360	200	620	1470	550
Վարելահող	210	-	270	460	35
որից՝ ջրովի	150		-	-	10
Ցանվող կուլտուրաներ (հա)	60	-	50	225	-
Այգիներ	հիմնականում տնամերձ				
Խոշոր եղջերավոր անասուններ	210	100	290	530	200
որից՝ կով	140	60	120	260	92
Խոզեր	120	50	80	150	-
Կոմբայններ	1	-	-	-	1
Տրակտորներ	12	-	12	32	2
Բեռնատարներ	10	15	8	16	

Դիտարկվող համայնքների մրցակցային առավելությունները

Բարենպաստ պայմաններ հողագործության և այգեգործության համար.

Համեմատաբար մեղմ կլիման և բերրի սևահողերը ստեղծում են բարենպաստ պայմաններ ինչպես հողագործության, այնպես էլ այգեգործության զարգացման համար:

Խոշոր եղջերավոր անասնապահության զարգացման համար նպաստավոր պայմաններ.

Հասանելի են բավարար քանակությամբ արոտավայրեր և խոտհարքեր անասնապահության զարգացման համար: Խոտհարքերն ու արոտավայրերը տեղակայված են տարբեր դիրքերում և բարձրության վրա, ինչն ապահովում է անասնախոտի հավաքման և արոտներում թարմ խոտի առկայության առավել երկար ժամանակահատված:

Գրեթե բոլոր համայնքները ունեն մեկ վայրում կենտրոնացած հեռագնա արոտ, որի հետևանքով ֆերմերները ճանաչում են իրար և առկա է համագործակցություն:

Երևան - Իջևան - Թբիլիսի միջպետական ավտոճանապարհ.

Ավտոճանապարհը անցնում է գյուղերի կողքով: Գյուղերում կան բնակիչներ, ովքեր արտադրված գյուղմթերքները վաճառում են ճանապարհին:

Գյուղատնտեսության ոլորտում փորձի և մասնագետների առկայություն.

Երկար տարիներ գյուղատնտեսությունը եղել է այս համայնքների բնակչության համար հիմնական եկամտի աղբյուր, ինչի հետևանքով համայնքներում առկա է փորձ՝ հողագործության (մասնավորապես՝ հացահատիկի աճեցում, եգիպտացորեն և բանջարեղեններ) և այգեգործության ոլորտում:

Համագործակցության և համատեղ որոշումներ կայացնելու ունակություն.

Համայնքներում բնակիչները ունեն համատեղ վաճառքի, մատակարարման և այլ աշխատանքների կատարման մեծ փորձ: Համայնքներում կարևոր որոշումները կայացվում են մասնակցային:

Համայնքերի տնտեսության առաջատար ճյուղերի վերլուծություն

Գյուղերում դանդաղ, բայց հաստատուն քայլերով զարգանում է հողագործությունը, անասնապահությունը և այգեգործությունը: Մինևույն ժամանակ համանքներում հասունացել է առաջնային գյուղատնտեսական ապրանքների վերամշակման փուլը. մարդիկ սկսել են խոսել, պլանավորել և փորձեր անել գերփոքր արտադրամասերի ստեղծման կամ տնային պայմաններում այդ աշխատանքների իրականացման համար:

- Հողագործություն
 - հացահատիկի մշակում
 - բանջարեղենի մշակում
 - ջերմոցային տնտեսություններ
- Անասնապահություն
 - Խոշոր եղջերավոր անասնապահություն
 - Խոզաբուծություն
- Այգեգործություն
 - Արքայանարինջ
 - Դեղձ
 - Թուզ
 - Սալոր
- Մեղվապահություն



Հողագործությունը համայնքներում

Սովետական տարիներին հողագործությունը զարգանում էր այս համայնքներում: Բանջարեղենի, հացահատիկի և եգիպտացորենի մշակումը համայնքներում ապահովում էր կայուն եկամուտ բնակիչների համար: Այժմ էլ այս համայնքներում հողագործությունը տնտեսության հիմնական ճյուղերից մեկն է, որը սակայն որակական առումներով և կազմակերպման ձևով էականորեն տարբերվում է:

Հողերի մասնատումը, ոռոգման հետ կապված դժվարությունները, մաշված գյուղտեխնիկան, վերամշակման բացակայությունը և կայուն պահանջարկի բացակայությունը ոլորտը դարձրել են ոչ շահութաբեր, և այժմ բնակիչները չեն կարողանում միայն հողագործությամբ բավարարել կամուտ ստեղծել սեփական կարիքների բավարարման համար: Դրա արդյունքում բնակչության մի մասի համար հողագործությունը դարձել է եկամտի լրացուցիչ աղբյուր, որոնց հիմնական եկամուտը ստեղծվում է այլ ոլորտներում՝ այդ տվում նաև արտագնա աշխատանքի միջոցով:

Վարելահողերում հիմնականում աճեցնում են հացահատիկ, եգիպտացորեն և ծխախոտ, իսկ տնամերձերում՝ հիմնականում բանջարեղեն:

Վերջին տարիներին համայնքներում սկսել են զարգանալ ջերմոցային տնտեսությունները, որտեղ աճեցվող բանջարեղենը մրցունակ է Հայաստանի այլ մարզերում արտադրվող բանջարեղենի հետ:

Հացահատիկի մշակումը համայնքներում

Հիմնականում աճեցվում է ցորեն. մեկ տնտեսության կողմից միջին մշակվող հողատարածքը մեկ հեկտար է: Արտադրված ցորենի մոտ 50 տոկոսը օգտագործվում է որպես անասնակեր, մնացած մասը վաճառվում է կամ արտադրվում է այլուր՝ հիմնականում տնտեսության ներքին պահանջարկը բավարարելու համար:

Բարձր բերքատվությունը համայնքների անջրդի հողերում կազմում է 3.2 տոննա մեկ հեկտարից: Այս թիվը բավականին տատանվող է և կախված է եղանակային պայմաններից, սերմացուից, ինչպես նաև գյուղտեխնիկայի հասանելիությունից:

Ստորև ներկայացված է անջրդի հողերում ցորենի մասով ծախսերի և եկամուտների հաշվարկը մեկ հեկտարի համար:

- Վար - 2 անգամ = 70 000 - 80 000 դրամ
- Սերմ - 300 կգ x 160 դրամ = 48 000 դրամ
- Դիզվառելիք - 60 լիտր = 30000 դրամ
- Պարարտացում - 6 պարկ = 42000 դրամ
- Բուժանյութ - 17000 դրամ

- Ցանք - 20000 դրամ
- Հունձ - 25000 դրամ
- Այլ - 50 000 դրամ

Ընդամենը ծախս - 302 000 դրամ:

Ցորենի նման մշակման դեպքում ստացվում է մոտ 3.5 **տոննա** բերք:

Շուկայական միջին գներով եկամուտը մեկ հեկտարի հաշվարկով կազմում է 3.2 տոննա (մոտ 300 կգ պակասում է զտման դեպքում) * 160 դրամ = 480 000 դրամ:

Շահույթ՝ 480000 դրամ - 302 000 դրամ = 172 000 դրամ:

Զրովի հողատարածքներում հնարավոր է ստանալ մոտ 1 տոննայով ավելի բերք, քան անջրդի հողատարածքներում: Այս դեպքում ծախսերը կավելանան մոտ 50 000 դրամով և կկազմեն 352000 դրամ, իսկ եկամուտը կկազմի 4.2 տոննա * 160 դրամ = 672 000 դրամ: Շահույթը կկազմի 320 000 դրամ:

Չնայած ջրելու դեպքում շահույթի ակնհայտ աճին (70 - 80 %)՝ ցորենն հիմնականում աճեցնում են անջրդի հողերում, քանի որ ջրովի հողերը սահմանափակ են, այնտեղ աճեցվում են ավելի մեծ եկամտաբերություն ունեցող մշակաբույսեր, ստեղծվում են այգիներ:

Ցորենի աճեցումը հիմնականում պայմանավորված է մշակման դյուրինությամբ. ամբողջ տարվա ընթացքում մարդիկ զբաղված են լինում 10 - 15 օր:

Կերային ճակնդեղ

Կերի ճակնդեղի մշակման ծավալները վերջին տարիներին սկսել են աճել, ինչը պայմանավորված է ցորենի հետ համեմատած բարձր բերքատվությամբ և, հետևաբար, նաև եկամտաբերությամբ: Կերային ճակնդեղի աճեցումը ևս դյուրին գործընթաց է:

Մեկ հեկտարից ստացվում է 45 տոննա բերք, որն առկա շուկայական գներով ապահովում է մոտ 1 125 000 դրամ եկամուտ (մեկ կիլոգրամի շուկայական արժեքը՝ 25 դրամ):

Ճակնդեղի մշակման հիմնական ծախսերը ներկայացված են ստորև.

- Վար - 80 000 դրամ,
- Սածիլ - 50000 սածիլ * 6 դրամ = 300 000 դրամ,
- Մշակում - 50 000 դրամ,
- Այլ - 80 000 դրամ,
- Ընդամենը ծախս - 510 000 դրամ:

1 հեկտար ճակնդեղի մշակումը, շուկայական գներով արտահայտած, ապահովում է 615 000 դրամ եկամուտ: Միննույն ժամանակ, քանի որ թե՛ ցորենի և թե՛ ճակնդեղի հիմնական մասը օգտագործվում է որպես անասնակեր, ճակնդեղի մշակումը դառնում է ավելի արդյունավետ:

Ծխախոտ և Եգիպտացորեն

Երկու մշակաբույսերն էլ ունեն բարձր շահութաբերություն՝ համեմատած ճակնդեղի և ցորենի հետ: Միննույն ժամանակ այս բույսերի մշակման համար անհրաժեշտ է որակյալ ոռոգման հնարավորություն: Մշակումը բավականին աշխատատար է:

Ծխախոտը աճեցվում է International Masis Tabac (ԻՄՏ) ընկերության աջակցությամբ: Միջին բերքատվությունը 15-20 տոննա է, որն ապահովում է 400 - 600 հազար դրամ շահութաբերություն: Այս ոլորտում բավարար են աջակցության մեխանիզմները, առկա է կայուն պահանջարկ:

Համայնքներում Եգիպտացորենի մշակման փորձը գալիս է դեռևս սովետական տարիներից: Մեկ հեկտարի բերքատվությունը մոտ 8 տոննա է կազմում: Կան հիբրիդային սորտեր, որոնք ապահովում են մինչև 15 տոննա բերքատվություն: Հիբրիդային սորտերի գինը ավելի էժան է, քանի որ օգտագործվում է որպես անասնակեր: Ընդհանուր առմամբ 1 հեկտարի աճեցումը ապահովում է 800 000 - 1 000 000 դրամ շահութաբերություն: Եգիպտացորենի աճեցման հիմնական խնդիրը ոռոգովի վարելահողերի պակասությունն է, մշակման դժվարությունը, մշակող գյուղտեխնիկայի սակավությունը և ոչ բարվոք վիճակը, ինչպես նաև ոչ ստաբիլ պահանջարկը:

Բանջարեղենի աճեցում

Պատահական չէ, որ բանջարեղենի մշակումը գյուղերում համարվում է հողագործության առավել եկամտաբեր ճյուղերից մեկը: Դեռևս սովետական տարիներին բանջարեղենի մշակումը այս համայնքերում բավականին տարածված և եկամտաբեր է եղել: Հետագայում՝ հիմնականում ոռոգման հետ կապված դժվարությունների պատճառով բանջարեղեն սկսեցին մշակել միայն տնամերձերում՝ սեփական օգտագործման համար:

Ստորև լուրիկի օրինակով ներկայացված է այս ոլորտի շահութաբերությունը:

Ծախսեր

վար	2 անգամ	80 000 դրամ
սաճիլ	2500 հատ	100 000 դրամ
սաճիլացում		120 000 դրամ
պարարտանյութ	400 կգ	50 000 դրամ
ջուր		100 000 դրամ
փխրեցում, քաղհան		100 000 դրամ
բերքի հավաքում		100 000 դրամ
այլ		50 000 դրամ
Ընդամենը		700 000 դրամ

Եկամուտ

40 տոննա x 50 դրամ = 2 000 000 դրամ, որից շահույթ՝ 1 300 000 դրամ:

Ի տարբերություն այլ մշակաբույսերի՝ բանջարեղենի մշակման մեջ մեծ են նաև ծախսերը, ինչը ևս խանգարում է այս ոլորտի արագ տեմպով զարգացմանը:

Ջերմոցային տնտեսություններ

Համայնքներում ակտիվորեն զարգանում են նաև ջերմոցային տնտեսությունները: Նույնիսկ ձմռան երկու ամիսներին ջերմատներում բանջարեղեն չարտադրելու դեպքում ջերմոցային տնտեսությունները բավականին եկամտաբեր են:

Բնակլիմայական պայմանները ևս նպաստում են ջերմատների զարգացմանը: Ջերմատները թույլ են տալիս արտադրելու բանջարեղեն գարնան վերջին և ուշ աշնանը, երբ շուկայում սպառվել է բանջարեղենի հիմնական բերքը, հետևաբար, առկա է մեծ պահանջարկ, և գները համեմատաբար բարձր են:

100 մ² արտադրական տարածք ունեցող ջերմոցը տարվա ընթացքում ապահովում է մոտ 600 000 դրամ շահույթ:

Արտադրվող բերքը վաճառվում է համայնքների ներսում, ինչպես նաև՝ վերավաճառողների միջոցով:

Համայնքներում առկա են մասնագետներ, ովքեր փորձի միջոցով ձեռք են բերել բավարար գիտելիքներ՝ ջերմատներում բանջարեղենի մշակման և հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների անցկացման համար:

Նախաձեռնություններ հողագործության ոլորտում

- Աճեցվող մշակաբույսերի որակյալ սերմերի ձեռքբերման աջակցություն հողագործներին,
- Նոր մշակաբույսերի աճեցման հնարավորությունների բացահայտում և սերմի ներկրման աջակցություն, որոնք կարող են մրցունակ լինել համայնքներում,
- Գյուղտեխնիկայի թարմացման աջակցություն,
- Ջերմատների հիմնման աջակցություն,
- Կարճաժամկետ գյուղատնտեսական ծախսերի ֆինանսավորման հնարավորությունների ստեղծում հողագործների համար,
- Բերքաբեր համայնքում ոռոգման ներքին ցանցի վերանորոգման աջակցություն:

Անասնապահությունը համայնքներում

Համայնքներում հիմնականում զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ: Գերակշռում են կովկասյան գորշ տեսակի կովերը, որոնց ավանդապես պահել են այս շրջաններում: Միջին կաթնատվությունը 1500 - 2000 լիտր է տարեկան:

Համայնքում խոշոր եղջերավոր անասունների թիվը 1330 գլուխ է, որից կովերը 672 -ն են՝


- ⇒ 16 տնտեսությունն ունեն 25 և ավել գլուխ անասուն,
- ⇒ 10 տնտեսությունն ունեն մոտ 10 - 25 գլուխ անասուն,
- ⇒ 175 տնտեսությունն ունեն մինչև 10 գլուխ անասուն,

Համայնքներում արտադրվող կաթը կաթնամթերքի արտադրության խոշոր կազմակերպությունների կողմից չի մթերվում, տեղական մթերողներ գրեթե չկան, ինչը խնդիր է առաջացնում կաթի վաճառքի համար: Տնտեսությունների հիմնական մասը, որոնք ունեն մի քանի գլուխ անասուն, կաթը օգտագործում են իրենց տնտեսությունների ներքին սպառման համար, վաճառում են քիչ քանակությամբ պանիր՝ հիմնականում ծանոթ - բարեկամների միջոցով:

10 և ավելի կով ունեցող ֆերմերները արտադրում են հիմնականում պանիր՝ այն վաճառելով հիմնական հաճախորդներին, ինչպես նաև փոխանակում այլ մարզերի արտադրանքների հետ: Այս ֆերմերները ապրում են հիմնականում հեռագնա արտոներում, որտեղ կաթի հավաքման բավարար պայմաններ չկան:

Համայնքներում փորձեր են արվել նոր սորտերի անասունների ներկրման և բազմացման, սակայն ավանդական պահքի մոտեցումները արդյունավետ չեն նոր սորտերի համար, ինչի արդյունքում նոր տեսակի անասունների կաթնատվությունը էականորեն չի տարբերվել կովկասյան գորշից: Միևնույն ժամանակ, ի տարբերություն կովկասյան գորշի, նոր տեսակի անասունները ադապտացված չեն երկար տարածություններ քայլելու համար:

Չնայած անասնապահության զարգացման բարենպաստ հնարավորություններին՝ այս ոլորտը հայտնվել է զարգացման փակ շրջապատույտի մեջ, ինչը խոչընդոտում է ոլորտի հետագա զարգացմանը:



Ինչպես երևում է վերը նշված պատկերում, անասնապահության զարգացումը ուղղակիորեն կապված է մի քանի ոլորտներում միևնույն ժամանակ հնարավոր միջամտությունների հետ, որոնք կարող են արդյունավետ դարձնել և խթանել անասնապահության զարգացումը:

Կովերի լիակրում

Կովկասյան գորշի լիակրման ցուցանիշը 3000 լիտր/տարի է: Լիակրման վրա ազդող հիմնական գործակիցը կերակրումն է՝ օրական կերամիավորի նորման կազմում է 9-10 կերամիավոր: Ձմեռվա ամիսներին կովին տրվող կերը մոտ 6 կերամիավոր է պարունակում (3-4 կերամիավորով պակաս նորմայից), ինչը և բերում է կաթնատվության անկմանը: Ստորև ներկայացված է կերամիավորների պարունակությունը՝ ըստ հաճախ օգտագործվող կերատեսակների.

Տեսակ	1 կգ-ի հաշվարկով կերամիավորը
Խոտ առվույտի	0,52
Ծղոտ գարու	0,36
Քուսպ արևածաղկի	1,1
Եգիպտացորեն	1,1
Թեփ ցորենի	0,7
Թեփ գարու	0,7
Կարտոֆիլ	0,3

Քանի դեռ կովկասյան գորշի լիակրումը չի ապահովվում, նոր տեսակների բազմացումը դառնում է ոչ արդյունավետ:

Կթի ավտոմատ սարքավորման կիրառում

Այն կարծիքը, որ կթի ավտոմատ սարքավորումները անորակ են և արդյունավետ չեն, չի արտացոլում իրական պատկերը: Իհարկե՝ ինչպես կթի, այնպես էլ ցանկացած սարքավորումների դեպքում հնարավոր են ինչպես արդյունավետ, այնպես էլ ոչ արդյունավետ սարքավորումներ:

Շուկայում հասանելի են որակյալ կթի սարքավորումներ, որոնք առանց դժվարության կարող են սպասարկել 10 կով և արժեն մոտ 450 000 դրամ: Ընդամենը մեկ ու կես տարում դրանք հետ են բերում վճարված գումարը:

Այսպես՝

Մեկ կովի համար կթվորին վճարվում է ամսական 3500 դրամ: 10 կովի դեպքում տարեկան ծախսվում է 3500 դրամ x 10 կով x 9 ամիս = 315 000 դրամ:

Կաթնատու տոհմային անասունների բուծում

Անասնապահության արդյունավետության բարձրացման եղանակներից է նաև արհեստական սերմնավորմամբ կաթնատու տոհմային սորտերի ստացումը¹:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի տեսակները հնարավոր է ստանալ արհեստական սերմնավորման եղանակով՝ առանց ծնելիության հետ կապված խնդիրների:

Այս երեք տեսակների կաթնատվությունը հետևյալն է՝

- Շվից, Հոլշտեյն - 12 000 լիտր (յուղի պարունակությունը՝ 3.5%)
- Ջերսի – 10 000 լիտր (յուղի պարունակությունը 6.0`%)

4 սերնդափոխություն է անհրաժեշտ հիմնական տոհմին շատ մոտ տեսակ ստանալու համար, որոնց կաթնատվության աճը ներկայացված է ստորև:

Սերունդ	Անվանում	Մակսիմալ կաթնատվություն	Թույլատրվում է հեռագնա արոտավայր տանել
Առաջին	F1	4000	Այո
Երկրորդ	F2	6000	Այո
Երրորդ	F3	8000	Ոչ
Չորրորդ	F4	10000 - 12000	Ոչ

¹ Ֆերմերների մոտ տարածված է այն կարծիքը, որ արհեստական սերմնավորման դեպքում կովկասյան գորշ տեսակը չի կարող ծնել հորթը:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի ցեղատեսակները բավարարում են **Մեկիության դյուրինության գործակցին**, ինչը ենթադրում է սորտափոխանակության ընթացքում ծնելիության հետ կապված խնդիրների բացակայություն:

Անասնապահության զարգացման նախաձեռնություններ

- Լրացուցիչ կերերի մշակման աջակցություն (խորհրդատվություն, սերմերի և գյուղտեխնիկայի ձեռք բերման աջակցություն),
- Կթի ավտոմատացված սարքերի ձեռք բերման աջակցություն, խորհրդատվություն,
- Արհեստական սերմնավորման հնարավորությունների ստեղծում, անասնաբույժերի վերապատրաստում,
- Սարիգյուղ համայնքի հեռագնա արոտներում կթի տաղավարի ստեղծման աջակցություն, ինչը թույլ կտա անձրևոտ եղանակին նաև առանց դժվարության կյթելու կռվերը,
- Հեռագնա արոտավայրում կաթի ընդունման և վերամշակման կետի արդյունավետ մոդելի կիրառում,
- Ֆերմերներին մատչելի երկարաժամկետ ֆինանսավորման հնարավորությունների ստեղծում՝ անասնազլխաքանակի քանակի մեծացման և գոմային պայմանների բարելավման համար:


Այգեգործությունը համայնքներում

Նույնիսկ համայնքների տարեց բնակիչները չեն հիշում մի տարի, երբ իրենց այգում չի աճել թուզը, նուռը, դեղձը և այլ մրգեր՝ հայկական լեռնաշխարհին հատուկ անկրկնելի համով և քաղցրությամբ: Ցավոք, անկախությունից հետո այգիների մեծ մասը սկսեցին չմշակվել և հետզհետե կորցրին իրենց որակական հատկանիշները:

Զարգացած այգեգործություն ունեցող համայնքները դադարեցին արտադրել միրգ՝ փոխարենը փորձելով եկամտի այլ աղբյուրներ գտնել փայտի վաճառքի, արտագնա աշխատանքի և այլ ոլորտներում: Մրգատու ծառեր հնարավոր էր տեսնել միայն փոքր տնամերձերում, որտեղից ստացվող բերքը օգտագործվում է սեփական կարիքների, տարբեր ապրանքների հետ փոխանակման և մի փոքր մասը՝ վաճառքի համար:

Վերջին տարիներին այգեգործությունը սկսել է դանդաղ վերականգնվել: Ջրովի հողատարածքներում մարդիկ այգիներ են հիմնում, ինչպես ավանդական մրգերի, այնպես էլ արևադարձային նոր տեսակների (հիմնականում՝ արքայանարինջ, նաև կիվի և այլն):

Ստորև ներկայացված է վերջին երեք տարիների ընթացքում նորաստեղծ այգիների տեսակարար կշիռը՝ ըստ մրգերի տեսակների:



Ինչպես երևում է վերը նշված սխեմայից, վերջին տարիներին նորաստեղծ այգիների 60%-ը արքայանարինջն է զբաղեցնում, ինչը պայմանավորված է մշակման դյուրինությամբ, ձմեռվա սեզոնին և վերամշակող արտադրամասերի կողմից (չորանոցներ, սառնարաններ) մեծ պահանջարկի առկայությամբ:

Ստորև ներկայացված է արքայանարնջի շահութաբերության համեմատականը՝ երկու այլ մրգերի հետ համեմատած.

1	Պտղի անվանումը	Դեղձ	Խնձոր	Արքայա- նարինջ
2	1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	20 000	25 000	25 000
3	1 կգ-ի միջին մեծածախ գինը	150	120	150
4	1 հա-ից ստացված եկամուտը ('2'x'3')	3000 000	3 000 000	3 750 000
5	Կատարված ուղղակի ծախսերը	800 000	420 000	300 000
6	Եկամուտ՝ հանած ուղղակի ծախսեր	2 200 000	2 580 000	3 450 000

Չնայած բարձր եկամտաբերությանը և մշակման դյուրինությանը՝ արքայանարնջի (նաև՝ թզի) աճեցման մեջ առկա է ցրտահարության վտանգ, որը, ի տարբերություն այլ մրգերի, արքայանարինջի դեպքում առավել վտանգավոր է, քանի որ ցրտահարվում է ոչ թե բերքը, այլ հենց ծառը (-15 աստիճանից ցածր ջերմաստիճանի դեպքում ծառը ցրտահարվում է): Ծառը դառնում է ոչ պիտանի և պետք է փոխարինել նորով: Տարեկան այգիների մոտ 5 % - ը ցրտահարվում է: Այս համայնքներում դրականը այն է, որ ցրտահարությունները հազվադեպ են լինում:

Այս վտանգը չի խանգարում մարդկանց արքայանարինջի նոր այգիներ ստեղծել և հուսալ, որ ցրտահարությունը կանցնի իրենց այգու կողքով:

Նորաստեղծ այգիների մոտ 15 % -ը խնձորի այգիներն են: Սա բացատրվում է նրանով, որ առկա է կայուն պահանջարկ, համեմատաբար հեշտ է մշակել: Ինչպես նաև ցրտահարված արքայանարինջի ծառը հիմնականում փոխարինում են հենց խնձորենիով:

Սալորի մասնաբաժինը նորաստեղծ այգիների մեջ մոտ 10%-ն է (հիմնականում՝ մեծ սև սալոր): Սալորը դիմացկուն է ցրտահարությունների նկատմամբ, շուկայում պահանջված է ինչպես թարմ տեսքով, այնպես էլ՝ չորացրած:

Դեղձը զիջում է իր դիրքերը մրգերի այլ տեսակներին, քանի որ մշակումը առավել բարդ է. դեղձը կայուն չէ հիվանդությունների նկատմամբ, անհրաժեշտ են մեծ թվով կանխարգելիչ միջոցառումներ, ինչպես նաև հնարավոր չէ երկար ժամանակ բերքը պահել, ինչի պատճառով բերքի մեծ մասը փչանում է և օգտագործվում որպես անասնակեր կամ օղու հումք:

Համայնքներում այգեգործության զարգացումը ուղղակիորեն կապված է վերամշակող արտադրամասերի զարգացման հետ՝ չորանոցներ, սառնարաններ մուրաբաների, ջեմերի և հյութերի արտադրություն և այլն:

Այս մասին վկայում է սույն ծրագրի շրջանակներում Բագրատաշենի ենթաշրջանում մրգերի վերամշակման փոքր արտադրամասերի հիմնման աջակցությունը, որն ունեցավ էական ազդեցություն շրջանում այգեգործության զարգացման վրա և, որ ամենակարևորն է, համայնքի այգեգործների մոտ տեղի ունեցավ վստահության աճ՝ մրգերի պահանջարկի և սպառման հետ կապված: Այգեգործության զարգացմանն են նպաստում նաև Այրումի, Սևքարի և այլ համայնքներում գործող արտադրամասերը:

2014 թ-ին Բագրատաշենի ենթաշրջանում մշակվել է ավելի քան 100 տոննա դեղձ, ինչը գնալով աճելու է և կայուն ցուցանիշ է այգեգործի համար՝ իր այգիները մշակելիս:

Վերամշակող ձեռնարկությունները կարող են ոչ միայն որպես հումք օգտագործել աճեցվող միրգը, այլև համայնքները շրջապատող անտառների անսահմանափակ հնարավորությունները՝ հատապտուղներ, վայրի մրգեր և բույսեր, որոնք այժմ էլ հավաքվում են համայնքների բնակիչների կողմից և էժան գներով վաճառվում Իջևանի շուկայում կամ խոշոր մթերողներին:

Նախաձեռնություններ այգեգործության և մրգերի վերամշակման ոլորտներում:

Այգեգործություն

- Ցրտադիմացկուն տնկիների աճեցման և ներկրման օժանդակություն,
- Որակյալ թունաքիմիկատների ձեռք բերման աջակցություն և խորհրդատվություն,
- Հայկական մրգի արտահանման հնարավորությունների բացահայտում և խորհրդատվություն,

- Այգեգործության զարգացմանն ուղղված նպատակային ֆինանսավորման հնարավորության ստեղծում (երկարաժամկետ և մատչելի նպատակային վարկեր),
- Այգեգործության վերաբերյալ գիտելիքներ:

Վերամշակում

- Չորանոցների հիմնման աջակցություն,
- Սառնարանների հիմնման աջակցություն,
- Պահածոյացման արտադրամասերի հիմնման աջակցություն,
- Մրգերի արտահանմամբ զբաղվող ձեռներեցների աջակցություն:

Մեղվապահության զարգացման հնարավորությունները համայնքներում

Չնայած ոչ ստաբիլ վաճառքին և շուկայում բավականին մեծ մրցակցությանը՝ մեղվապահությունը համայնքներում ևս ապահովում է որոշակի եկամուտ: Մեղվապահության ոլորտի անհրաժեշտությունը առավել հստակ երևում է համայնքների այն հատվածներում (Բերքաբերը՝ ամբողջությամբ), որոնք ուղիղ նշանառության տակ են Ադրբեջանի կողմից: Այս հատվածներում թե՛ հողագործությունը, թե՛ այգեգործությունը և թե՛ անասնապահությունը ուղղակիորեն վտանգ են ներկայացնում հողագործի և ֆերմերի համար:

Մեղրի վաճառքի միջին գինը 3500 - 4000 դրամ է: Մեկ փեթակից ստացվում է մոտ 15 կգ մեղր, որը ապահովում է 50 - 60 հազար դրամ շահույթ մեղվապահին:

Մեղվապահության հետագա զարգացումը էականորեն կապված է վաճառքի հնարավորությունների բացահայտմամբ, վաճառքի պլանավորման հմտությունների զարգացմամբ և շուկայի ուղղությամբ զարգացման նախաձեռնությունների մշակմամբ:

Նախաձեռնություն

Մեղվապահության զարգացման ռազմավարության ստեղծում և աջակցության ամբողջական փաթեթի տրամադրում գյուղացուն՝ արտադրություն - վաճառք բոլոր փուլերի համար:

- Անասնապահությամբ չեն կարողանում զբաղվել, թուրքերը սպանում են անասունին: Այգի ու հողատարածք վախենում են մտնել, կկրակեն: Չեն ուզում լքել հայրենի տունս, բայց ի՞նչ անեն: Ամեն անգամ երբ կրակում են, ու երեխեքս վազելով անկողնու տակ են մտնում, ուզում են հավաքել ամեն ինչ ու գնամ... , բայց էլի մնում են: Լավագոն էս ճանճերը կան, էլի եկամուտ են բերում, վաճառում են մեղրը ու ապրում...

Շնորհակալություն ենք հայտնում համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

